12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում միասնական տարածաշրջան:**

1) թեթև արդյունաբերական
2) տնտեսաաշխարհագրական
3) հանքարդյունահանող
4) գյուղատնտեսական

2 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում համաաշխարհագրական տարածաշրջան:**

1) Ավստրալիա
2) Լատինական Ամերիկա
3) Եվրասիա
4) Հարավային Ամերիկա

3 **Ստորև թվարկվածներից որտե՞ղ կան գիտաքաղաքներ (տեխնոպոլիսներ):**

1) Արևելյան Աֆրիկա
2) Հյուսիսային Ամերիկա
3) Կենտրոնական Աֆրիկա
4) Հարավային Աֆրիկա

4 **Ստորև թվարկվածներից ո՞ր մեգալոպոլիսն է գտնվում Գերմանիայում:**

1) Հռենոս-Ռուրյան
2) Տոկայդո
3) Լոնդոն-Լիվերպուլյան
4) Սան-Սան

5 **Ստորև թվարկվածներից ո՞ր մեգալոպոլիսն է գտնվում ԱՄՆ-ի Մեծ լճերի ափին:**

1) Չիփիթս
2) Տոկայդո
3) Բոսվաշ
4) Սան-Սան

6 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկիրը չի մտնում ԱՍԵԱՆ-ի մեջ (Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա):**

1) Ուզբեկստան
2) Մալայզիա
3) Սինգապուր
4) Ինդոնեզիա

7 **Ստորև թվարկված երկրներից ո՞րն է գրանցել բարձր տնտեսական աճ՝ վերջին 50 տարում:**

1) Հյուսիսային Կորեա
2) Գանա
3) Հարավային Կորեա
4) Օման

8 **Ստորև թվարկված տարածաշրջաններից ո՞ր երկիրն է համարվում արիդ:**

1) Եմեն
2) Բրազիլիա
3) Պերու
4) Արգենտինա

9 **Ստորև թվարկված տարածաշրջաններներից որտե՞ղ է գտնվում Լիբիան:**

1) Կենտրոնական Ասիա
2) Հյուսիսային Աֆրիկա
3) Կենտրոնական Ամերիկա
4) Արևմտյան Եվրոպա

10 **Ստորև թվարկվածներից ո՞րը երկիրը չի համարվում Եվրամիության անդամ երկիր:**

1) Դանիա
2) Գերմանիա
3) Բելգիա
4) Թուրքիա

11 **Բնական գազի համաշխարհային պաշարների քանակով ո՞ր տեղն է զբաղեցնում Ռուսաստանի Դաշնությունը:**

1) առաջին
2) երկրորդ
3) երրորդ
4) չորրորդ

12 **Թվարկված վերազգային կորպորացիաներից ո՞րն է ամերիկյան:**

1) «Նեսթլե»
2) «Մերսեդես»
3) «Բոինգ»
4) «Էյրբաս»

13 **Ստորև թվարկվածներից ո՞ր համամոլորակային հիմնախնդիրն է ամենաքիչը ուսումնասիրված:**

1) բնապահպանության
2) ժողովրդագրական
3) Համաշխարհային օվկիանոսի
4) խաղաղության պահպանման

14 **Ո՞ր երկրու՞մ է կառուցվել ամենամեծ ատոմակայանը:**

1) ԱՄՆ
2) Ֆրանսիա
3) Ռուսաստան
4) Ճապոնիա

15 **Էկոհամակարգի այն վիճակը, երբ խախտվում են էկոհամակարգի կապերը, նյութերի շրջապտույտը, միջավայրը սկսում է քայքայվել, անհետանում են բուսական ու կենդանական տեսակները, շատանում են մարդկանց հիվանդությունները, կոչվում է.**

1) էկոլոգիական աղետ
2) ռացիոնալ բնօգտագործում
3) էկոլոգիական ճգնաժամ
4) ռեսուրսների խնայողություն

16 **Ըստ անգլիացի տնտեսագետ Թոմաս Մալթուսի՝ գերբնակեցման վերացման գործոն է.**

1) ծնելիության խթանումը
2) կրթական մակարդակի աճ
3) համաճարակները
4) միգրացիաները

17 **Սովի և թերսնման վերացման հիմնախնդրով զբաղվում է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), որի փորձագետների կարծիքով զարգացող երկրների մեջ թերսնվողների ամենամեծ մասնաբաժինն ունի.**

1) Լատինական Ամերիկան
2) Արևելյան Ասիան
3) Կենտրոնական Աֆրիկան
4) Մերձավոր Արևելքը

18 **Ո՞ր երկրում է ՄԶՀ-ն ամենացածրը:**

1) Ֆրանսիա
2) Նորվեգիա
3) Նիգերիա
4) Զիմբաբվե

19 **Ստորև թվարկված հակամարտություններից ո՞րն է խաղաղ կերպով հանգուցալուծում ստացել:**

1) Քաշմիրի հակամարտություն
2) Տրիեստի հակամարտություն
3) Արցախի հակամարտություն
4) Աբխազիայի հակամարտություն

20 **Ստորև նշվածներից ո՞ր ծովն է առանձնապես շատ աղտոտված:**

1) Միջերկրական ծով
2) Կորալյան ծով
3) Կարիբյան ծով
4) Ճավայի ծով